ՍԻՐԵՐԳ (1)

Պարտէզ մ'ըլլամ, ո՜վ սիրական,
Ու դուն սրտիս վրայ ծաղկած
Արեւաթոյր ճերմակ շուշան։

Երկինք մ'ըլլամ ամառնային,
Դուն՝ կամարիս նետուած՝ փաղփուն
Մի ծանի անծի՛ր գոտին։

Մատուռին մէջ ըլլամ կանթեղ,
Ու դուն ծոցիս մէջ կայծկըլտուն
Լոյսի պատրոյգ խորհրդաղեղ։

Ա՜խ, երանի՜ այդն ըլլայի
Ու դուն ցօղիկն առաւօտեան.
Քեզ իմ չունչով վի՛ր տանէի։

Ծով մ'ըլլայի ես փոթորկուն,
Դուն՝ առագաստ մեղրալուսնի,
Մերթ գրկէի՛ քեզ... ջրամոյն։

Ա՜խ երգեհոն մ'ըլլայի դա՜շն,
Եւ ամէն օր ըստեղիս վրայ
Համբուրէի՛ մատներդ բուրեան։

Եւ կամ քնար մը նո՜ւրբ ու թրթռուն
Երանութեանը ընծայուած
Քու ձեռքերուդ քըմայքներուն...։

Գիրք մ'ըլլայի ես ոսկեպատ,
Դուն՝ էջերուս անջի՛նջ տըպուած՝
Առասպելի մէկ լո՜յս հէքեաթ...։

Ծո՜ւնկ ըլլայի, ո՜վ իմ ասպետս,
Ու բուրվառին մէջ աչքերուդ
Գիշեր ցորեկ այրէի՛ ես...։

Օ՜, թագուհի՛ մ'ըլլայի հեզ,
Գահ ու ոսկի, թագ ու մական
Ոտքերուդ տակ թափէի ես...։

Արքատի՜ ես լեռը վէս,
Դուն՝ սրտիս վրայ ձիւն ըսպիտակ...
Այդ-բաժակով ըմպէի՛ քեզ...։

ՀԱՑԵԼԻՆ

Լիճ մ'էիր յըստակ, լոյսի շողերուն դիմաց
օրօրուող,
Աստղերն ու լուսնակ կ'ալեծըփէին շրջանակիդ
մէջ,
Ու խորհուրդ մ'անճառ կը պըսպըղար միշտ,
պրիսմակ ոսկեշող,
Ծոցդ լուսառէջ։
Անծիր ջուրերու դիմաց կը նազէր — նարկիզ
հիասքանչ —
Թովիչ աղջնակ մ'հասակով սօսի, լոյսէ վար-
սերով,
Ու զով ափերդդ կը սիրէր քաղել մարգրիտ ու
կակաչ,
Վարդեր հոգեթով։
Տէ՛ս, սա տանջակոծ կիներ ջուրերուդ դիմաց
անապակ.
Խորշոմներն իր խոլ, մաշուքն յարաճուն ճանչ-
ցաւ անձկագին
Ու լացաւ ճակտին կնճիռներն իր հոծ, ծամերն
ըսպիտակ՝
Դէմ քու անդունդին...։
Քու խոր անդունդին՝ ուր մութ ըստուերներ
երկիւղ կը մաղեն,
Ու թանձրութիւնն հոծ կը չափէ խաւարն ահեղ
վիհերուն,
Մինչ ափերուդ վրայ ուռի մը կուլայ՝ օրրելով
ճիւղերն՝
Վախճա՜ն իրերուն...։

Հոկտ. 1947 ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ

---

(1) Այս երկու տաղերը գեղեցկագոյն երգերն են Տիկին Մառի Աթմաճեանի բանաստեղծուրիւնից հաւաքածուին զոր մեր մեծատաղանդ աշխատակցուհին «Գողգոթայի Շուշաններ» տիտղոսով այս օրերս հրատարակ հանեց։ Թոյլ առնենք որ «Անահիտ»ի կամ արտասահմանի քանի մը ուրիշ հայ թերթերու մէջ հետեւեցան այդ բարձրօրէն օժտուած բանաստեղծուհւոյն գրական շքեղ վերելքին, պիտի փութան անշուշտ օրինակ մը առնել այդ հատորէն որ գտայլելի փառք մըն է զգացումով ու մտածումով հարուստ երբարեւստ ձեւով ու այլազան բովանդակութեամբ հերթուածներու։ Ա. Ջ.

digitised by A.R.A.R.@